

ԴԵՐԱՆՎԱՆ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

ԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ 

Երևանի պետական համալսարան

Դերանվան՝ որպես խոսքի մասի ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ ոչ միօրինակ է և հստակ, կան տարակարծություններ, տարբեր տեսակետներ: Չկա միօրինակություն նույնիսկ դերանվանը տրված սահմանումների հարցում:

Սույն հոդվածը նվիրված է այս խոսքի մասի՝ Սերգեյ Աբրահամյանի կողմից կատարված ծավալուն և արժեքավոր հետազոտության վերլուծությանը, բերած նորություններին:

Արդի հայերենի դերանուններն ուսումնասիրելով խորաքնին և նորովի՝ Ս. Աբրահամյանը դասակարգել է դրանք, տեսակավորել, բնութագրել յուրաքանչյուր տեսակը՝ որոշ դեպքերում առաջարկելով նոր անվանումներ դրանց համար, բացահայտել դերանունների ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները և, որ ամբողջովին նորություն էր հայ քերականագիտության մեջ, քննել դրանց կազմությունը, բառակազմական նշանակությունը և ոճական կիրառությունները:

Գիտնականը իրավացիորեն մերժել է տարածված այն տեսակետը, թե դերանունների գլխավոր հատկանիշը այլ խոսքի մասերին փոխարինելու գործառնություն է, որդեգրել այն համոզումը, որ դերանունների մեծ մասը գուրկ է փոխարինման գործառնության, և որ այդ գործառնությունը կատարող մի խումբ դերանուններ էլ ոչ միշտ են կատարում այն:

Դերանունների դասդասման հիմքում դնելով առարկան, հատկանիշը ինչպես արտահայտելու, ինչ հարաբերությամբ դրանք ցույց տալու հիմունքը՝ հայագետը փոփոխություն է մտցրել արդի հայերենի դերանվանական համակարգում՝ միավորելով որոշ տեսակներ և վերանվանելով մի քանիսը: Արդյունքում տարբերակել է դերանվան վեց տեսակ՝ *անձնական (դիմային), ցուցական, փոխադարձ, որոշյալ*

• **Աննա Աբաջյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

Анна Абаджян – доктор филологических наук, профессор, заведующая кафедрой истории армянского языка и общего языкознания ЕГУ

Anna Abajyan – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics

Էլ. փոստ՝ abajyan.anna@ysu.am <https://orcid.org/0000-0003-3728-0862>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.09.2025

Գրախոսվել է՝ 13.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

(հանրական), անորոշ (մասնական), հարցական-հարաբերական (բացարձակ անորոշ): Փոխել է անձնական, ցուցական դերանուններին տրվող սահմանումները, միավորել որոշյալն ու ժխտականը և այլն:

Բանալի բառեր – դերանուն, ցուցական, փոխադարձ, հարաբերական, դերանվանական հոլովում, բառակազմություն, ածանց, բարդ դերանուն, շարահյուսական գործառույթ, ոճական կիրառություն

Մեծ է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Աբրահամյանի ավանդը ժամանակակից հայոց լեզվի քերականության ուսումնասիրության բնագավառում, որտեղ նա բացեց իր ուրույն՝ աբրահամյանական ակոսը: Լեզվական երևույթների խորքը թափանցելու բնատուր բացառիկ կարողությամբ օժտված գիտնականը իր աշխատություններում ճշգրտել է հայերենի քերականական կառուցվածքի մի շարք ըմբռնումներ, տվել դրանց նորովի մեկնաբանություններ՝ իր նոր խոսքով զարգացնելով արդիի հայ լեզվաբանությունը:

Անուրանալի է Ս. Աբրահամյանի դերը հայերենի ձևաբանական կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում, ուր նա մուտք գործեց «Արդի հայերենի դերանունները» (1956) աշխատությամբ, որին հաջորդեցին «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» (1959), «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու բառաքերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» (1965) մենագրությունները:

Հայոց լեզվի տեսության համապարփակ քննության ընթացքում գիտնականին հետաքրքրել են հատկապես քիչ ուսումնասիրված, որոշակի բարդություն ներկայացնող հարցեր, ինչպիսիք են խոսքի մասերի համակարգն ու նրա դասակարգումը: Ս. Աբրահամյանն իր կուռ տրամաբանությամբ կարողացել է գիտականորեն հիմնավորել խոսքի մասերի համակարգի ոչ թե նույն բնույթի ու մակարդակի, այլ տարաբնույթ, տարբեր աստիճանի հակադրությունների ամբողջություն լինելը և արել նոր առաջարկ՝ խոսքի մասերի բազմաստիճան դասակարգում: Խոսքի մասերի ավանդական համակարգում նա կատարել է գիտական ևս մի նորամուծություն՝ առաջին անգամ հայերենում առանձնացնելով եղանակավորող բառերը (վերաբերական) մակբայներից, քննել դրանց բառաքերականական յուրահատկությունները:

Նշենք, որ ակադեմիկոսը համակողմանիորեն հետազոտել է հայերենի բոլոր խոսքի մասերը, սակայն դրանց մեջ առանձնանում է արդի հայերենի դերանուններին նվիրված արժեքավոր մենագրությունը:

Յոթ գլուխներից բաղկացած ծավալուն աշխատության մեջ Ս. Աբրահամյանը ներկայացրել է խնդրո առարկա հարցի մանրամասն պատմությունը հայերենագիտության մեջ՝ սկսած Դ. Թրակացուի հայ մեկնիչներից մինչև Գ. Ավետիքյան, Ա. Բագրատունի, Մ. Չամչյան, Ա. Այտընյան, Մ. Պալասանյան, Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Գ. Սևակ և Ա. Ղարիբյան, ըստ անհրաժեշտության՝

անդրադարձել նաև ռուս և օտար հեղինակներին: Քննելով հայերենի դերանունները նոր մոտեցումով՝ նա դասդասել է դրանք, տեսակավորել, բնութագրել յուրաքանչյուր տեսակը, բացահայտել դերանունների ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները և քննել դրանց կազմությունը, բառակազմական նշանակությունը և ոճական կիրառությունները:

Հնագույն շրջանից սկսած՝ դերանունը ճանաչվել է որպես առանձին խոսքի մաս և իբրև այդպիսին՝ ներկայացվել հայերենի քերականություններում:

Դերանվան՝ որպես խոսքի մասի, ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ ոչ միօրինակ է ու հստակ, առաջ է բերել տարակարծություններ, տարաբնույթ տեսակետներ: Տարբերվում են անգամ լեզվաբանների՝ դերանվանը տված սահմանումները: Լեզվաբանության հիմնադիր Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության թարգմանության մեջ գրված է. «Դերանունություն է բառ փոխանակ անուան առեալ, որոշեալ դիմաց յայտական»¹: Այն համարվել է ավանդաբար ընդունված ութ խոսքի մասերից մեկը (անուն, բայ, դերանուն, հոդ, ընդունելություն, մակբայ, նախդիր-նախադրություն և շաղկապ)²:

Դերանունը անվան փոխարինող է. այս հատկանշով են բնութագրել հիշյալ խոսքի մասը՝ սկսած Դ. Թրակացու քերականության հայ մեկնիչներից մինչև տասնիններորդ դարի քերականները:

Արևելահայերենի գիտական քերականության հիմնադիր Մ. Աբեղյանի անվան հետ է կապված հայ քերականագիտության պատմության մեջ նոր շրջանի սկսվելը: Հեղինակն իր «Աշխարհաբարի քերականություն» և «Հայոց լեզվի տեսություն» աշխատությունների մեջ տալիս է խոսքի մասերի՝ իր կողմից արված իմաստաբանական-շարահյուսական դասակարգումը: Աբեղյանը չի ընդունում դերանունը որպես առանձին խոսքի մաս և բաշխում է հարաբերակից համապատասխան խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, թվականի և մակբայի մեջ:

Այլ հայեցակետի կողմնակից է Ս. Աբրահամյանը: Նախևառաջ գիտնականը մերժում է տարածված այն տեսակետը, թե դերանունների գլխավոր հատկանիշը այլ խոսքի մասերին փոխարինելու գործառնություն է:

Քննելով դերանվան տարբեր տեսակները, աչքի առաջ ունենալով գրավոր աղբյուրներից քաղած փաստական հարուստ նյութ՝ գիտնականը հանգում է այն եզրակացությանը, որ դերանունների մեծ մասը գուրկ է փոխարինման գործառնությից, և որ այդ գործառնությից կատարող մի խումբ դերանուններ էլ ոչ միշտ են կատարում այն. «Նույնիսկ նման դեպքերում այլ բառերի փոխարեն դրվելը բխում է նրանց գործածության որոշ պայմաններից, այն բանից, որ այդ դեպքում նրանք ցույց են տալիս խոսողին հայտնի, անվանված առարկա, օբ-

¹ **Адонц Н.** (1915) Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, с. 27.

² Այս մասին տե՛ս **Աբաջյան Ա.** (2012): Դերանվան ըմբռնումը // Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 3, էջ 31-38:

յեկտ: Այդ ֆունկցիան դերանունների ոչ թե էությունն է հանդիսանում, այլ այդ էությունից ու գործածության յուրահատուկ պայմաններից բխող հետևանք, ուրեմն և պայմանական ֆունկցիա է: Այդ նույն իմաստով փոխարինման ֆունկցիա հաճախ կատարում են նաև այլ խոսքի մասեր: Նշանակում է փոխարինման ֆունկցիան դերանունների՝ որպես խոսքի մասի, հիմնական հատկանիշը չէ»³:

Հաջորդ խնդիրը, որ իր առջև դնում է գիտնականը, դերանունների և հարակից խոսքի մասերի հարաբերակցությունների պարզաբանումն է: Որ դերանուններն իրոք հարաբերակից են գոյականին, ածականին, թվականին, մակբային, դա կասկած չի հարուցում՝ ըստ լեզվաբանի, սակայն դերանունների բաշխման միակ հիմունքը շարահյուսական է և արդարացված չէ տեսականորեն ու քերականորեն⁴: Եզրակացությունը հետևյալն է. ա) դերանունների՝ այլ խոսքի մասերի հետ ունեցած հարաբերակցությունը պետք է ընդունել զգալի վերապահությամբ, բ) չի կարելի դերանունները դասել այլ խոսքի մասերի մեջ, եթե անգամ առկա է այդպիսի հարաբերակցություն, քանի որ դերանունները առարկան, նրա հատկանիշը արտահայտում են ընդհանուր, չտարբերակված կերպով՝ ի տարբերություն մյուս խոսքի մասերի⁵: Այնուհետև հայագետը, քննելով դերանվան այս կարևոր յուրահատկությունը, գուցահեռներ է տանում որոշ գոյականների ունեցած ընդհանուր իմաստի հետ և կատարում հետևյալ եզրահանգումները, որ 1) բոլոր դերանուններին հատուկ է առարկան կամ հատկանիշը այս կամ այն հարաբերությամբ ցույց տալը, 2) որոշ դերանուններ չեն արտահայտում ոչ առարկայի, ոչ էլ որպիսության, չափ ու քանակի կամ գործողության հատկանշի իմաստ, որի արդյունքում հնարավոր չէ որոշել դրանց՝ այլ խոսքի մասերի պատկանելը:

Այսպիսով՝ ամփոփելով դերանվան՝ որպես խոսքի մասի, վերաբերյալ ընդարձակ շարադրանքը՝ Ս. Աբրահամյանը տալիս է դերանվան իր տարբերվող սահմանումը. «Դերանուն են կոչվում այն բառերը, որոնք, ունենալով ընդհանուր, չտարբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս կամ ակնարկում են որևէ հարաբերությամբ, որևէ ձևով»⁶:

Անդրադառնանք դերանունների դասակարգման հարցին: Առաջնորդվելով գիտական դասակարգման պահանջներով՝ Ս. Աբրահամյանը իրավացիորեն ցույց է տալիս, որ դերանունների ընդունված դասակարգումը անմիօրինակ է, կատարված չէ մեկ ընդունված հիմունքով: Դիցուք՝ եթե ժխտական դերանունների էական առանձնահատկությունը ժխտում արտահայտելն է, հարցականներինը՝ հարցում արտահայտելը, ապա հարաբերականներինը

³ Աբրահամյան Ս. (1956): Արդի հայերենի դերանունները, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 48-49:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 40-62:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 53:

⁶ Նույն տեղում, էջ 62:

ստորադասը գերադասին կապելն է և այլն: Ինչպես երևում է, կիրառված են միանգամայն տարբեր հիմունքներ: Շարունակելով դերանվան մնացյալ տեսակների քննությունը՝ գիտնականը եզրակացնում է, որ «դերանունների դասդասման հիմքում պետք է ընկած լինի այն, թե առարկան, հատկանիշը ինչպես են արտահայտվում դերանունների մեջ, ինչ հարաբերությամբ են վերջիններս ցույց տալիս դրանք»⁷: Հաշվի առնելով դասակարգման նշյալ հիմունքը՝ հայագետը փոփոխություն է մտցնում արդի հայերենի դերանվանական համակարգում՝ միավորելով որոշ տեսակներ և վերանվանելով մի քանիսը: Արդյունքում տարբերակում է դերանվան վեց տեսակ՝ *անձնական (դիմային), ցուցական, փոխադարձ, որոշյալ (հանրական), անորոշ (մասնական), հարցական-հարաբերական (բացարձակ անորոշ)*: Նկատենք, որ Մ. Ասատրյանն էլ, այսպես կոչված, «խկական» է համարում անձնական, ցուցական, փոխադարձ և հարցական-հարաբերական դերանունները, մնացածը՝ «անխկական»⁸:

Ինչպիսի՞ք են աբրահամյանական ընկալումները: Քննենք դրանք առանձին-առանձին:

Այսպես՝ լեզվաբանը մերժում է **անձնական դերանուններին** տրվող ընդունված սահմանումը, այն է՝ անձ ցույց տվող դերանունը կոչվում է անձնական, որը խոսքի մեջ դրվում է բոլոր անձերի փոխարեն: Չէ՞ որ կան դերանուններ, որոնք անձ են ցույց տալիս, դիցուք՝ *ամենքը, յուրաքանչյուր ոք, ումանք, ովևե* և այլն, որ ամեննին էլ անձնական դերանուններ չեն: Կամ՝ պարտադիր չէ, որ անձնական դերանունները անպայման անձ ցույց տան. կարող են նաև առարկա ցույց տալ (օրինակ՝ *Ղու, Արագած, պմաստ վահան...; Ղու ինչո՞ւ չես բացվում, ա՛յ դուռ...* և այլն): Թեպետ, ինչպես նշում է գիտնականը, անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերով առարկա ցույց տալը այնքան սովորական չէ, որքան երրորդ դեմքով. «Երրորդ դեմքի անձնական դերանուններով թե՛ առարկա և թե՛ անձ ցույց տալը սովորական է այն պատճառով, որ երրորդ դեմքը ցույց է տալիս նրան, որի մասին խոսվում է, իսկ որպես այդպիսին հավասարապես կարող են հանդես գալ թե՛ առարկան և թե՛ անձը»⁹:

Կարծում ենք՝ կարևոր էր այստեղ հաշվի առնել այն հանգամանքը, որ *նա* դերանունը հավասարապես և՛ անձնական է, և՛ ցուցական:

Գիտնականը անձնական դերանունների համար ավելի առանցքային համարում է ոչ թե անձ, այլ դեմք ցույց տալը: Անձ ցույց տալը հետևանք է համարում դիմային հարաբերության, այդ պատճառով կոչում է դիմային դերանուններ (личные местоимения): Ի վերջո տալիս է հետևյալ ձևակերպումը.

⁷ Նույն տեղում, էջ 98:

⁸ Տե՛ս **Ասատրյան Մ.** (2002): Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Եր., ԵՊՀ հրատ., էջ 167:

⁹ **Աբրահամյան Մ.**, նշվ. աշխ., էջ 104:

«Անձնական (դիմային) կոչվում են այն դերանունները, որոնք ցույց են տալիս անձ (երբեմն առարկա)՝ ըստ խոսողի նկատմամբ ունեցած հարաբերության»¹⁰:

Ցուցական դերանունների հետ կապված՝ Ս. Աբրահամյանն ունի իր նոր ասելիքը: Եթե սրանց բնորոշ տարածական հարաբերությունների իմաստ ունենալու մասին բազմիցս խոսվել է, ապա ժամանակային հարաբերությունների իմաստն առաջին անգամ նկատել և ուսումնասիրել է հեղինակը, հանգամանորեն քննել ժամանակային հարաբերությունների շատ նրբերանգներ՝ ժամանակ նշող բառերի հետ գործածվելով (ժամ, բույս, գիշեր, գարուն, հունվար և այլն): Ահա և ցուցականների փոքր-ինչ տարբերվող սահմանումը. «Ցուցական են կոչվում այն դերանունները, որոնք առարկա կամ հատկանիշ են մատնացույց անում տարածական ու ժամանակային հարաբերությամբ»¹¹:

Հետաքրքիր է ցուցական դերանունները երկու խմբի բաժանելու սկզբունքը. մեկում ընդգրկված են **նույն** բաղադրիչով կազմված բոլոր միավորները և **մյուս** դերանունը, մյուսում՝ մնացածը՝ երեք առանձին շարքերով՝ **ս**-ունեցող (այս...), **դ**-ունեցող (այդ...) և **ն**-ունեցող (այն...):

Ս. Աբրահամյանը չի ընդունում **Ժխտական դերանունը** որպես դերանվան առանձին տեսակ և միավորում է որոշյալ դերանունների հետ՝ անվանելով **հանրական** դերանուններ: Դա հիմնավորում է հետևյալ կերպ. որոշյալ և դրանց համապատասխան ժխտական դերանունների ցույց տված հարաբերության իմաստի միջև տարբերություն չկա, դրանք բոլորն էլ ունեն հանրական իմաստ. միայն եթե միևնույն իմաստը որոշյալ դերանունների մեջ հաստատական ձևով է արտահայտված, ժխտական դերանունների մեջ ժխտական ձևով է՝ *ամեն որ - ոչ որ, ամեն ինչ - ոչինչ, ամեն մի - ոչ մի, ամեն մեկը - ոչ մեկը*: Կարծում ենք՝ հիմնավորումը սպառիչ է:

Անորոշ դերանունների հետ կապված՝ Ս. Աբրահամյանը նշում է, որ ի տարբերություն որոշյալ դերանունների, որոնք հանրական իմաստ ունեն, անորոշ դերանունների իմաստը **մասնական** է, այսինքն՝ ցույց են տալիս առարկաներից մեկը կամ մի քանիսը (մասնական իմաստի մասին գրել է դեռևս Գ. Ավետիքյանը¹²):¹³:

Իր ժամանակվա բոլոր դասագրքերում ընդգրկված անորոշների ցուցակից նա իրավացիորեն հանում է *ուր որ է, ինչ որ է, որքան որ է* կառույցները՝ հիմնավորելով, որ դրանք չեն գիտակցվում որպես մեկ բառ, բառակապակցություններ են: Փոխարենը ներմուծում է *մի շարք* և *մի երկու* ձևերը և բացատ-

¹⁰ Նույն տեղում, էջ 105:

¹¹ Նույն տեղում, էջ 131:

¹² Տե՛ս **Աւետիքեան Գ.** (1823): Քերականութիւն հայկական, ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, էջ 31:

¹³ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 147-148:

րում, որ *շարք, երկու* բառերը տվյալ դեպքում կորցրել են իրենց բառային նշանակությունը¹⁴:

Ս. Աբրահամյանը, անդրադառնալով հարցահարաբերական դերանուններին, բարձրացնում է մի շարք հարցեր և տալիս պատասխանները: 1) Ի՞նչ հիմունքով են միևնույն ձևն ունեցող դերանունները հին ու նոր քերականները համարում տարբեր. հարաբերականի՝ ստորադաս նախադասությունը գերադասին կապելը շարահյուսական գործոն է: 2) Անճիշտ, թերի է հարցական դերանուններին տրվող սահմանումը, թե դրանք արտահայտում են հարցում գոյականի, ածականի, թվականի և մակբայի մասին: Բերված օրինակներով նա հիմնավորում է, որ այդ հարցումը ոչ թե գոյականի, ածականի, թվականի և մակբայի մասին է, այլ առարկայի, նրա հատկանշի կամ գործողության հատկանշի մասին (նկատենք, որ ցուցակում չկա *ինչո՞ւ* դերանունը): Հարցական և հարաբերական դերանունների առանձնացման հիմունքները քննելիս հեղինակը բերում է դասագրքից քաղված հինգ օրինակներ՝ ցույց տալու համար հարաբերական դերանվան կապակցական դեր կատարելը: Նշենք, որ այդ օրինակներից երկուսում հարաբերականները շփոթված են հարցականների հետ (Ընկերդ կասի, թե *ինչպիսի* աշակերտ եմ ես: Ես քեզ կարող եմ ասել, թե *քանիսն* են եկել: Դերանունների շարահյուսական կիրառություններին նվիրված բաժնում այդ վրիպումը ակնառու է): Գիտնականը պայմանական է համարում գործածության նշված երկու յուրահատկությունների հիման վրա (հարցականների հարցում արտահայտելը և հարաբերականների կապակցական դերը) դրանց տարանջատումը: Բերում է նաև մեկ այլ կիրառություն՝ բացականչական նախադասությունների օրինակներ: Այստեղ ավելորդ չենք համարում անդրադառնալ Ս. Մարգարյանի տեսակետին: Ս. Մարգարյանը Ս. Աբրահամյանի նման հարցական և հարաբերական դերանունները միավորում է՝ կոչելով ոչ թե հարցահարաբերական, այլ հարաբերահարցական ընդգծելով, որ հարցական դերանունների համար հիմք են ծառայել հարաբերական դերանունները և ոչ հակառակը¹⁵: Ջարմանք է առաջացնում Ս. Մարգարյանի այն դիտարկումը, թե հարցական նշանի փոխարեն շեշտ կամ բացականչական նշան կրելու դեպքում դերանունը հարաբերական է¹⁶, որը, անտարակույս, մերժելի է: Առոգանության ո՞ր նշանն էլ լինի կիրառված, դերանունը մնում է հարցական:

Ս. Աբրահամյանն այնուհետև բերում է *որպես, ինչպես* բառերի կապական կիրառությունների օրինակներ (դրանք հենց կապեր են նման դեպքերում) և եզրակացնում, որ հարցականը և հարաբերականը դերանվան տարբեր տեսակներ չեն, միևնույն տեսակի դերանուններ են¹⁷:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 148-154:

¹⁵ Տե՛ս **Մարգարյան Ս.** (2004): Հայոց լեզվի քերականություն, Եր., ԵՊՀ հրատ., էջ 297:

¹⁶ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 300:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 155-167:

Հարցահարաբերական դերանունները լեզվաբանը կոչում է **բացարձակ անորոշ** անունով, քանի որ հենց բացարձակ անորոշն է նրանց էական ու բնորոշ հատկանիշը: Ըստ հեղինակի՝ եթե անորոշ դերանունները իրենց մասնական հարաբերության շնորհիվ գոնե մոտավոր գաղափար տալիս են հատկապես քանակի վերաբերյալ, ապա հարցահարաբերական դերանունները բոլորովին անորոշ կերպով են արտահայտում քանակի գաղափար (համեմատենք՝ *մի քանի* և *որքան*):

Արդի հայերենի դերանունների ձևաբանական առանձնահատկություններին նվիրված գլխում լեզվաբանը մանրակրկիտ ուսումնասիրում է դերանունների հոլովման և հոգնակիակազմության կրած փոփոխությունները, որից բխում են հետևյալ եզրահանգումները.

1) Դերանվանական հոլովումը զգալիորեն իր տեղը զիջել է անվանական հոլովմանը: Որոշ դերանուններ ամբողջովին են անցել անվանական հոլովման, մի քանիսն էլ մասամբ՝ որոշ հոլովներում¹⁸, գրաբարում դերանվանական հոլովմամբ հոլովվող մի քանի դերանուններ դարձել են չհոլովվող, վերացել է գրաբարյան դերանունների անվանական հոլովման բազմազանությունը: Այս ամենը գալիս է ապացուցելու, որ լեզվի քերականական կառուցվածքի տարրերի կապը սերտ է, մասնավորապես՝ հայերենի երկու տեսակի հոլովումները՝ անվանական և դերանվանական, մեկուսացած չեն իրարից, գտնվում են փոխազդեցության մեջ, որի արդյունքում էլ տեղի է ունեցել անվանական հոլովման սահմանների ընդլայնում՝ ի հաշիվ դերանվանականի¹⁹: Հավելենք մի դիտարկում՝ մաքուր դերանվանական հոլովում արդի հայերենում չկա (բացառական, գործիական, մասամբ նաև ներգոյական հոլովները նկատի ունենք), անվանականը և դերանվանականը հանդես են գալիս գիրկընդխառն, այնպես որ ճիշտ կլիներ այդ հոլովումը կոչել դերանվանաանվանական կամ անվանադերանվանական:

2) Դերանունների թվի քերականական կարգը, ի տարբերություն գոյականների, աչքի է ընկնում անմիօրինակություններով, այսպես՝ **ք** հոգնակերտը մեծ դեր է խաղում հատկապես արմատական դերանունների մեջ, դերանունների մի մասի հոգնակին կազմվում է ոչ թե եզակիից, այլ ուրիշ արմատից (*ես-մենք*), բավական շատ են հոգնակի չունեցող, ինչպես նաև եզակի չունեցող դերանունները, որոշ դերանուններ էլ գրաբարում ունեցել են հոգնակի, հետագայում զրկվել դրանից (*այս, այդ...*)²⁰:

Չափազանց ուշագրավ են արդի հայերենի դերանունների կազմությանն ու բառակազմական նշանակությանը, ինչպես և նրանց ոճական կիրառություններին նվիրված բաժինները, որոնք, կարելի է ասել, ամբողջովին նորությո-

¹⁸ Այս մասին տե՛ս **Աբաջյան Ա.** (2006): Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Եր., ԵՊՀ հրատ., էջ 397-400:

¹⁹ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 168-192:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 199-200:

յուն էին դերանունների ուսումնասիրության մարզում: Դերանունների խորագին քննությունը գիտնականին բերում է այն ճշմարիտ եզրակացությանը, որ արդի հայերենի դերանունների մեծ մասը գոյություն ունեւ գրաբարում, սակայն ոչ բոլորն են անցյալում համարվել դերանուններ, քանի որ գրաբարի քերականները դերանուն են համարել միայն գոյականին փոխարինող բառերը: Ներկայիս դերանունների միայն շատ փոքր մաս չի եղել հին հայերենում, ինչպէս՝ *այստեղ, այդտեղ, այնտեղ, որտեղ, ինքս, ինքդ, միննույն, մեկմեկու, մի երկու, մի շարք, քանիերորդ, որերորդ*, որոնք կազմվել են հետագայում: Գիտնականը նշում է երեք ուղի, որոնցով տեղի է ունեցել գրաբար-աշխարհաբար անցումը.

ա) Որոշ դերանուններ պահպանվել են գրական և խոսակցական լեզուներում:

բ) Մի զգալի մասը ձևով գրաբարյան է, հնչյունափոխված տարբերակով կան բարբառներում (*էս, էդ, էն...*):

գ) Մի մասն էլ ժամանակակից հայերենին անցել է գրական ճանապարհով (*յուրաքանչյուր, ամեն ոք, երբեւէ* և այլն):

Կարծում ենք՝ ավելորդ էր երրորդ ուղին առանձնացնելը, քանի որ բոլորի ակունքն էլ գրաբարն է եղել²¹:

Եթե ամբողջացնելու լինենք Ս. Աբրահամյանի կողմից կատարված՝ դերանունների բառակազմական վերլուծությունը, ապա կստացվի հետևյալ պատկերը. մեծ թիվ են կազմում բարդ դերանունները (հատկապէս մեծ են *այս, այդ, այն, նույն, որ, ինչ* դերանուններ + *պէս, քան, չափ, տեղ* կաղապարով կառույցները), կան կցական (*երբեւէ, միննույն, մյուս*), արմատի կրկնությամբ կազմված (*այլևայլ, ինչ-ինչ*) բարդություններ, իսկական բարդություններով կազմված դերանուններ չկան, մի երկուսը կազմվել են *դերանուն+դերանուն* կաղապարով (*ամեն ինչ, յուրաքանչյուր ոք*), մի մասը արմատական դերանուններ են, դերանուններին բնորոշ չէ ածանցով կազմությունը. թերևս բացառություն են *երորդ* վերջածանցով երկու կազմությունները՝ *քանիերորդ, որերորդ*: Ինչ վերաբերում է *մի երկու, մի շարք* դերանուններին, ապա սրանք առանձնացվել են հենց Ս. Աբրահամյանի կողմից և հիմնավորվել ըստ արժանավոյն²²:

Մինչև Ս. Աբրահամյանը ոչ մի լեզվաբան հատուկ ուշադրություն չէր դարձրել այն հարցին, թե բառակազմական տեսակետից ինչ դեր ունեն դերանունները բառապաշարի հարստացման գործում: Ուսումնասիրելով դերանունները նաև այս առումով՝ գիտնականը փաստում է՝ ինչքան որ անմիօրինակ են այս խոսքի մասի մեջ զետեղված բառերը, նույնքան էլ անմիօրինակ է նրանց բառակազմական դերը և բերում է համոզիչ հիմնավորումներ: Այսպէս՝ անձնական դերանունների մեջ ամենաակտիվը *ինքն* դերանունն է (ներ-

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 240-245:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 245-250:

կայացնում է ինքն-ով սկսվող բառերի 178 միավորից բաղկացած ցուցակ), մի քանի բառեր կան՝ *էս*-ով բաղադրված, իսկ մնացածով բառեր չեն կազմվում: Դրա պատճառն այն է, որ դեմքի գաղափարը չկա *ինքն*, *էս* դերանունների մեջ: *Ինքն* դերանունը գրաբարում սաստկական իմաստ էր արտահայտում: Կենսունակ են նաև *ամեն* որոշյալ և *այլ* անորոշ դերանունները: Եզրակացությունը հետևյալն է. քիչ թվով դերանուններ են ընդունակ բառեր կազմելու, դրանց կարող է ավելանալ *ան*- ժխտական ածանցը: Այլ բաղադրյալ կազմություններում դերանունը լինում է առաջին միավորը: Որպես բացառություն լեզվաբանը բերում է *ընդամենը* բառը (մեր կողմից հավելենք *միայն*, *այսինքն*): Կարևորում ենք Ս. Աբրահամյանի այն դատողությունը՝ կապված դերանունների բառակազմական դերի հետ, որ բառային հիմնական ֆոնդի մեջ գտնվող մեծաքանակ արմատական դերանուններ չունեն բառակազմական դեր՝ ի տարբերություն գոյականական արմատների: Եվ դա նշան է այն բանի, որ միայն արմատական լինելը և դարավոր գոյությունը բավարար պայման չեն դրա համար²³:

Ինչպես վերը նշվեց, մինչև Ս. Աբրահամյանը դերանունների ոճական կիրառությունների քննությունը չի արժանացել լեզվաբանների ուշադրությանը: Մոտավորապես իննսունեջանոց շարադրանքում գիտնականը իրեն բնորոշ բծախնդրությամբ, հենվելով գեղարվեստական գրականությունից, մամուլից քաղված օրինակների վրա, բացահայտում է դերանունների կարևոր դերն ու նշանակությունը նաև այս առումով, խորհելու նյութ տալիս հետագա ուսումնասիրողին: Միայն *ինչ* հարցական դերանվան համար բերում է կիրառության 14 հնարավոր դեպք, որպես օրինակ՝ նշենք մեկ-երկուսը՝ *Ղու ի նչ իրավունք ունես*- ժխտական իմաստով՝ չունես: *Ի նչ, մի թե որդին պարտավոր չէ կատարել իր հոր վերջին կամքը*- որպես վերաբերական: Շատ հետաքրքիր է *մեկը* դերանվան մի ինքնատիպ կիրառություն՝ բացասական երանգավորմամբ, որ նկատել է Ս. Աբրահամյանը. Կեղծավորի *մեկն* է (հիշենք «Կախարդական հայելի» մուլտֆիլմը. խաբեբայի *մեկն* է, կաշառակերի *մեկն* է, այլանդակի *մեկն* է և այլն):

Դերանունները ոճական կիրառություններն առումով ևս տարբերվում են իրարից, օրինակ՝ իրենց բնույթով պայմանավորված՝ փոխադարձ դերանունները չեն դրսևորում ոճական յուրահատկություններ: Ուսումնասիրության այս հատվածը հնարավորություն է տալիս նոր հայացքով նայելու դերանուններին, նրանց խոսքիմասային տեղաշարժերին, առանցքային այն դերին, որ ունեն նրանք բաղադրյալ շաղկապների, մանավանդ վերաբերականների (*քանի դեռ, որտեղի՞ց* - ոչ) կազմության մեջ: Պակաս հետաքրքրական չեն նաև բերված որոշ բառակապակցություններ: Այսպես՝ *մի տեսակ* նշանակում է *անսովոր*: *Մի փոքր* կապակցությունը, ըստ նրա, սովորաբար դրվում է բայի

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 260-261:

վրա, կարող է նաև հատկանիշ արտահայտել: Այստեղ նկատենք մի հանգամանք. համեմատենք՝ *մի փոքր* համբերել – *մի փոքր* աղջիկ կառույցները. սրանցում տարբեր են դրանք: Միայն բայի հետ գործածվելիս, այսինքն՝ պարագայի պաշտոնում է *մի փոքր*-ը դիտվում կապակցություն, նախադասության մեկ անդամ, իսկ որպես որոշիչ՝ *մի*-ն և *փոքր*-ը ունեն առանձին շարահյուսական պաշտոններ (Ս. Աբրահամյանի բերած վեց նախադասությունները դա են հաստատում)²⁴:

Այսպիսով՝ ամփոփենք մեր ասելիքը:

Արդի հայերենի դերանուններն ուսումնասիրելով նորովի՝ Ս. Աբրահամյանը դասակարգել է դրանք, տեսակավորել, բնութագրել յուրաքանչյուր տեսակը՝ որոշ դեպքերում առաջարկելով նոր անվանումներ դրանց համար, բացահայտել դերանունների ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները և, որ ամբողջովին նորություն էր հայ քերականագիտության մեջ, քննել դրանց կազմությունը, բառակազմական նշանակությունը և ռճական կիրառությունները:

1. Գիտնականը մերժել է տարածված այն տեսակետը, թե դերանունների գլխավոր հատկանիշը այլ խոսքի մասերին փոխարինելու գործառույթն է, որդեգրել այն համոզումը, որ դերանունների մեծ մասը գուրկ է փոխարինման գործառույթից, և որ այդ գործառույթը կատարող մի խումբ դերանուններ էլ ոչ միշտ են կատարում այն:

2. Դերանվան ընդհանուր կամ չտարբերակված իմաստը դերանվան միակ առանձնահատկությունը չէ, այլ առանձնահատկություններից մեկը: Դերանվան՝ որպես խոսքի մասի, մյուս առանձնահատկությունը՝ առարկան կամ հատկանիշը որևէ հարաբերությամբ ցույց տալն է, այսինքն՝ հարաբերության իմաստը:

3. Դերանունների դասդասման հիմքում, ըստ գիտնականի, պետք է ընկած լինի այն, թե առարկան, հատկանիշը ինչպես են արտահայտվում դերանունների մեջ, ինչ հարաբերությամբ են վերջիններս ցույց տալիս դրանք: Եվ համաձայն այդ հիմունքի՝ հայագետը փոփոխություն է մտցնում արդի հայերենի դերանվանական համակարգում՝ միավորելով որոշ տեսակներ և վերանվանելով մի քանիսը: Արդյունքում տարբերակում է դերանվան վեց տեսակ՝ *անձնական (դիմային)*, *ցուցական*, *փոխադարձ*, *որոշյալ (հանրական)*, *անորոշ (մասնական)*, *հարցական-հարաբերական (բացարձակ անորոշ)*: Փոխել է անձնական, ցուցական դերանուններին տրվող սահմանումները, միավորել որոշյալն ու ժխտականը:

4. Դերանունների կազմության ու բառակազմական նշանակության հետազոտությունից արված եզրահանգումներ են. արդի հայերենի դերանունների մեծ մասը գոյություն ունեն հին հայերենում, սակայն ոչ բոլորն են անցյա-

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 321-322:

լում համարվել դերանուններ՝ գրաբարի քերականների՝ միայն գոյականին փոխարինող բառերը դերանուն համարելու պատճառով: Ներկայիս դերանունների միայն շատ փոքր մասը չի եղել հին հայերենում: Բառակազմական տեսանկյունից դերանունները որոշակի դեր ունեն բառապաշարի հարստացման գործում: Սակայն այստեղ ևս անմիօրինակ են դրանք, և դա ունի իր հիմնավորումները: Ամենաակտիվը նոր բառեր կերտելու գործում *ինքն* դերանունն է:

5. Ոճական կիրառություններին նվիրված մասը հնարավորություն է բացում նոր դիտանկյունից նայելու դերանուններին, առօրյա-խոսակցական լեզվում նրանց յուրօրինակ, բազմիմաստ կիրառություններին, խոսքիմասային անցումներին, այն դերին, որ ունեն վերջիններս բաղադրյալ շաղկապների, մանավանդ վերաբերականների կազմության մեջ և այլն:

6. Դերանունները մենիմաստ են: Ինը տասնյակից մի փոքր ավել քանակ ունեցող այս խոսքի մասը տարբերվում է իր գործածության հաճախականությամբ, մտնում գործուն բառապաշարի մեջ, նոր բառերով չի համալրվում: Սակայն, ինչպես տեսանք, Ս. Աբրահամյանը անորոշների մեջ ներմուծել է *մի երկուսը*, *մի շարք* դերանունները:

Հավարտ բերենք Հ. Բարսեղյանի՝ խնդրո առարկա աշխատությանը տված գնահատականը. Ս. Աբրահամյանի՝ արդի հայերենի դերանունների տեսակավորմանը, նրանց կազմությանը, ոճական կիրառություններին ու այլ խոսքի մասերի հետ ունեցած իմաստային ու գործառական փոխհարաբերություններին վերաբերող նկարագրությունը համարյա սպառիչ է²⁵:

АННА АБАДЖЯН – *Абраамяновское понятие местоимения.* – Новым взглядом изучая местоимения современного армянского языка, Сергей Абраамян классифицировал и разделил их. В основе классификации местоимений, по мнению ученого, было то, как выражается предмет или качество в местоимениях, каким соотношением они указывают на предмет или его качество. И согласно этому, арменовед внес изменения в систему местоимений современного армянского языка. В итоге он различил шесть видов местоимений: личные, указательные, возвратные, определенные, неопределенные, вопросительно-относительные. Он изменил определения, данные личным и указательным местоимениям, объединил определенные и негативные местоимения. Он раскрыл морфологические, синтаксические особенности местоимений и внес новизну в армянскую грамматику, изучая структуру, словообразование и стилистическое применение местоимений.

Ключевые слова: местоимение, указательные, взаимные, относительные, возвратные, склонение местоимений, словообразование, суффикс, сложные местоимения, синтаксическая функция, стилистическое применение

ANNA ABAJYAN – *Abrahamyan's Approach to Pronouns.* – While re-analysing the pronouns of Modern Armenian in a new way, S. Abrahamyan classified and categorized them. According to the scholar, the classification of pronouns should be based on how the object or

²⁵ Տե՛ս Բարսեղյան Հ. (1980): Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., ԵՊՀ հրատ., էջ 258:

quality is expressed within them and what kind of relationship they indicate. Based on this principle, the Armenologist introduced modifications to the system of Modern Armenian pronouns by merging certain types and renaming others. As a result, he differentiated six types of pronouns: personal (subject), demonstrative, reciprocal, definite (general), indefinite (partial), and interrogative-relative (absolutely indefinite). He revised the definitions of personal and demonstrative pronouns and unified the definite and negative categories. He identified the morphological and syntactic features of pronouns and, as an entirely new contribution to the Armenian grammar, examined their structure, word-formation significance, and stylistic usages.

Key words: *pronoun, demonstrative, reciprocal, relative, pronominal declension, word formation, affix, compound pronoun, syntactic function, stylistic usage*

References

- Abajyan, A. 2012. Deranvan ymbrnumy // Hayoc lezun ev grakanut'yuny dprocum, N 3, 31-38 (in Armenian).
- Abajyan, A. 2006. Hayereni holovakan hamakargi ymbrnumy ev patmakan zargacumy haj k'erakanut'yan mej, Yerevan, Yerevani petakan hamalsarani hratarakchut'yun, 444 ej (in Armenian).
- Abrahamyan, S. 1956. Ardi hayereni deranunnery, Yerevan, HSSR GA hrat., 351 ej (in Armenian).
- Adonc, N. *Dionisij Frakijskij i armjanskije tolkovateli*. Petrograd, 1915 (in Russian).
- Asatryan, M. 2002. Zhamanakacic hayoc lezu. Dzevabanut'yun, Yerevan, Yerevani petakan hamalsarani hratarakchut'yun, 217 ej (in Armenian).
- Avetik'yan, G. 1823. K'erakanut'yun haykakan, I Venetik, I vans Srbuyn Xazaru, 231 ej (in Armenian).
- Barseghyan, H. 1980. Hayereni xosqi maseri usmunqy, Yerevan, Yerevani hamalsarani hratarakchut'yun, 258 ej (in Armenian).
- Hayoc lezvi k'erakanut'yun, Yerevan, Yerevani petakan hamalsarani hratarakchut'yun, 625 ej (in Armenian).